յԱթոռն Արարատեան աշակերտեալ է յընթերցանութեան. . . . . զամս տասն և երեք, այն է ցմեռանելն ամն Պատրիարքութեան Երանելւոյ Հայրապետին մերում տեառն Ղուկասու:,, Եւ փոքր ինչ յետոյ կկրկնէ ''յետ վախճանի Սրբազան Պատրիարքին Ղուկասու ամ ու կէս գոլով խորհրդական գրագիր . . . [1]):,,

Զին արդեօ՞ք են Երանելւոյ և Սրբազան ածականներն անհերքելի ապացուցութիւններ, որ Ղուկասը չէ ենթարկուած կասկածանաց և ոչ խոշտանգուած Էջմիածնի միաբաններէն, իբր թէ նա համամիտ էր ուրումն խմբեալ պապականութեամբ Սարգսի Թէքիրտաղցւոյ [2]): Հազարէն աւելի շրջաբերականներ, ողջունագիրներ և կոնդակներ և նրանց պատճէններ սկըսւած Սիմէոնի օծուելէն ցՂուկասի վերադառնալն Մարաղայէն Էջմիածին, ժողոված էի, նրանից մէջը չէր պատահած ինձ Ղուկասի վերայ էդպիսի կասկածանք ընթեռնուլ, ընդհակառակը միշտ յարգանօք կյիշուէր նա, որպէս ի կենդանութեան, նոյնպէս և զկնի նրա մահուան:

(Մնացեալն ի յետագայս)

ԴԱԼՈՒՍՏ ՇԻՐՄԱԶԱՆԵԱՆՑ.

---

# ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

## ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ.

(Շարունակութիւն)

Աշխատանք և խնամք մասնաւորապէս վերաբերեալ տնկոց։ — Ծաղկոց։ — Կազմութեան այսօրինակ տեսակք ունին գերազոյն բարեխառնութիւն ըստ արտաքին օդոյ բարեխառնութեանն, զոր պահպանեն տնկոց չորս կողմն, որպէս նոցա պահպանութեան՝ նոյնպէս և պտղաբերութեան առթիւ։ Այսօրինակ գործողութիւնք են այնպիսի ապաստանարանք՝ ուր օտարերկրեայ տարրական բոյսք ցրտագին օդոյ խստութիւնն ոչինչ զգեն, ուր դալար տընկըք և ազորիքն իւրեանց յաջողութեան յարմար վիճակին հանդիպին, ու ր անբնական մշակութիւնն ծաղկանց փթթելոյ և պտղաբերութեան ժամանակն փութացուցանէ, որոց տեսակք բազումք են։

1. Նարընջենեաց ջերոցն է մասնաւոր և վայելուչ կազմուած, որ ցուրտ եղանակին մի քանի զարդարուն տնկոց կայարան է որոշված, որք անկարող են դիմադրել ցըրտոց սաստկութեան, մանաւանդ այսօրինակ տնկոց համար է այդ ապաստանարանն, նարընջենեաց, մրտենեաց, նռնենեաց և այլ հաստատատերև ծառոց։

---

(1) Ուստի՞ է արդեօք առած գիտնական ծերունի Գաբրիէլ Պատկանեանն, որ այսր ամի Արշալոյս Արարատեան անզուգական լրագրի համար 999 Թ. մէջ, իւր յօդուածումը կասէ. «Ներսէսն յԷջմիածին է առած վարդապետական աստիճանն, այն ինչ վերոյիշեալ ցուցակ առացեալ Եփրեմի Կոնդակի մէջին (զոր օրինակած եմ՝ Ներսէսի ձեռագրէն) կյիշուի առած էր նա այն աստիճանն 24 փետր. 1794 ամի ի Զմիւռնիա Դանիէլ Արքեպիսկոպոսէն (որ յետոյ Կաթուղիկոս ընտրուեցաւ), որի հետ և առաջին անգամն գնացած էր Պոլիս։ Ներսէսի կենսագրութեան մէջին ծերունի գիտնականէն կան ինչ ինչ զանազանութիւններ, որոնք չեն վերաբերիր մեր ներկայ նպատակին։

(2) Հ. Մ. Չամչեանն իւր Պատմութեան Երրորդ հատոր. երես 694–714 կյիշէ այս անուամբ Վարդապետ ոմն և յետոյ Պատրիարքացած Պոլիս 1664 ամին։ Ի հարկէ սա այլ ոմն պէտք էր լինէր, ըստ որում՝ մի դար առաջ էր Ղուկասէն։

2. Յատկապէս ասացեալ ապաստանարանք հաստատեալք են որչափ պտղաբերութեան համար, նոյնչափ եւ պահպանութեան համար. ապաստանարանք շինուած են այն ձեւով՝ որ նարընջենեաց ջերոցացն առաւել յարմար լինի ընդունել լոյս, եւ ունել մի անձուկ անջրպետութիւն ջերմագոլոյն եւ կենդրոնաւորութեանն: Նոցա պատուհանաց ապակիքն՝ որ իւրեանց որմոց հոյակապ մասն կազմեն, շատ անգամ բաղկացած են խոնարհեալ շերջանակօք, եւ շարժուն երեսօք, որոց վերայ կարեւորապէս տարածանեն վարագոյրս, փսիաթս, վանդակակերպ յարգեայ հիւսուածս եւ այլն: Բարեխառնեալ ապաստանարանն ընդունի զայնպիսի տունկս՝ որք ի ձմրան կրէին 4 աստիճանէն խոնարհագոյն բարեխառնութիւն, կամ նորա համար, որ տունկք նոյն եղանակի մէջ բուսանին եւ ծաղկին, կամ սորա համար, որ նոքա են մի գալար կամ լաւ եւս մատաղ կազմութիւն եւ ենթակայ են հիւծման, եւ այդ ապաստանարանքն գեղեցիկ եղանակի մէջ կարող են ծնանել առանց վերոյ նշանակեալ ծածկութից: Գլխաւորաբար Այրեցեալ գօտւոյ տնկոց սահմանուած ջերմ ջերոցաց մէջ, բնաւ պիտոյ չէ բարեխառնութիւնն 10 աստիճանէն սոսր իջուցանել, այլ պարտ է բարձրացուցանել մինչեւ 26ն: Հարաւային դիրքն, երկրի կորգաց ջերմութիւն եւ մի տարեկան այրելի փայտք՝ հազիւ կարող են բարեխառնութեան նոյն աստիճանն յառաջ բերել: Եւ ջերնոցի կազմութիւնն պարտաւոր է ապահովել նորա պահպանութիւնն:

Այս առաւել պատշաճաւոր է, եթէ այդ ջերոցն յեցեալ է մի քանի ապաստանարանաց, եթէ նորա հիմն է թանձր, եւ եթէ նորա գաւոն թմբուկ ի կիր արկանէ, Մետաղային շրջանակաւոր ջերոցք՝ թէպէտ մեծագին են եւ ջերմութեան պահպանութեանն սակաւապատեհ, որպէս փայտեայ շրջանակաւոր ջերոցք, բայց շնորհս առնեն Անգղիոյ իւրեանց տեսականութեամբ, իւրեանց պայծառութեամբ եւ իւրեանց վայելչութեամբն: Նոյնպէս կայ ջերոց՝ ջրոց ջերմութեամբն, որ՝ համեմատութեամբ ջերմ օդոյ եւ գոլորշեացն շրջանին՝ առթէ առաւել քաղցր, առաւել հաւասար, առաւել դժուարաբուծական, եւ առաւել տեւական մի ջերմութիւն, եւ սակաւակարօտ է հոգողութեան, եւ չունին ծխոց անպատեհութիւնն, որոց գործածութիւնն եթէ կամիս գիտել՝ ներկայացո քեզ մի սնդուկ եւ մի ջրալից անօթ նոյն բարձրութեամբն հաստատուած, եւ ի միջոյ ջերոցին հորիզոնական խողովակօք թող հաղորդակցութիւն ունենան մին ի ներքուստ եւ միւսն յարտաքուստ, եւ կաթսայն ջերմանալուն պէս այն ջերմութեան հաղորդութիւնն կհաստատի:

Ջերմ ջերոցաց տնկոց մեծ մասն դըրուած են անօթոց մէջ, զորս տեղաւորել պէտք է երկրի տախտակաց կամ աստիճանաց վերայ: Բայց ի խնամոց, զորս պարտիզպանք պարտաւոր են առնել համեմատութեամբ բարեխառնութեանն՝ պարտ է նաեւ յաճախակի այց ելանել այսպիսի տնկոց մաքրութեան եւ կանոնաւորութեանն: Պատշաճաւոր ջերմութեան աստիճանն այնպէս պէտք է պահել, կամ

ջուր ածելով ջրելով՝ կամ սրսկմամբ, օդափոխութեամբ նորոգել զօդն՝ մինչդեռ սառած չէ, և պէտք է բանալ ջերոցն արեգական ծագման ժամանակին ևս։

3. Շարժական ջերոց եւ ձմերանոց ծաղկանց եւ տնկոց։ — Երբեմն որմնայեց ծառոց պտղացուցման փութացուցանելոյ դիտաւամբ՝ ձմրան ձիւղ կլիսից պատշաճեցուցանեն որմոց՝ երկայն և նուրբ տախտակս, զոր խոնարհեցուցանեն, և նորա ծերպերն թաղեօք խնուն, իբրև մի ցանկապատ անջրպետութիւն գործեն, զոր վառարանի օգնականութեամբն ջերմացուցանեն։ Եթէ այս նուրբ տախտակք կազմուած են այն օրինակ՝ որ երկաթի գաւազանաւ շարժածուլին, կարելի է զայն ամրան եղանակին գործածել որմայեց ծառոց համար՝ պտղոց խայծման ժամանակին, նաև սեխատանի համար (բոստան)։

Առողջութիւն ընտանի անասնոց։ — Բնակութիւն։ — Չին պահին ախտոց մէջ, պաճարական անասունս գոմոց մէջ, զոչխարս փարախոց և անծածք արգելոցաց մէջ, զխոզս կրկնապատ բնակարանաց մէջ պահեն, ճագարս անբնական և ցանկապատ արգելոցաց և տնային արգելոցաց և դադարոց մէջ. փախստական և վայրի աղաւնիս հաստատուն աղաւնետանց մէջ, ընտանի աղաւնիս թռչնարանաց մէջ, փասիանս նոցա պատկանեալ պարտիզաց մէջ, ուր են ամբողջ վանդակապատ յամենայն կողմանց, հաւուց բնակարանի վայրապաւթի թռչունքն հաւատանց մէջ, զմեղուս փեթակաց մէջ, շերամն արուեստանոցի մէջ, որ յատկապէս շինուած է շերամոց սննդեան համար։ Առողջապահական կանոնք պահանջեն այսպիսի տեղերից բառնալ զխոնաւութիւն օդոյն, տալ ձիւղ բարեխառնութիւն, և այնպիսի դասաւորութիւն՝ որ արգելք չլինի նոցա աղբոց հոսմանցն. պէտք է միշտ բառնալ և նոցա կղկղանքն, և գործածել այլ ամենայն հնարս մաքրութեան։

Բազմապատկութիւն անասնոց։ — Ընտանոց բազմապատկութեան մէջ յառաջադրի մարդոյն կամ պահել՝ կամ փոխել զոյաւոր ցեղն։ Առաջնոյն մէջ բաւական է զուգաւորել զանհատս, որք առ առաւելն ներկայացուցանեն հաւասար բնաւորութիւնս վերաբերողս հասակի, ամաց և ուժգնութեան, և յարմարաւորս այլոց հանգամանաց նոցին։ Երկրորդին մէջ, կամ զայնս յօտար աշխարհ պէտք է տանել, կամ առանց մի օտարասէր խառնուրդի աճեցուցանել, կամ բազմացուցանել ընտիր տեղական ցեղի հետ, կամ զայնս զեղեցկացուցանեն նոյն իսկ ինքեամբք։

Այլասերութիւն։ - Ընտանեաց բազմապատկութեան բազմիցս հանդիպած արգելքն են այն առաջին երկու կերպն, և այնչափ նուաղականած է այդ բանն՝ որչափ որ ազնուական ցեղն յայտնապէս որոշված է, և այդ ազնուականի ցեղոյն սակաւ ինչ հակառակի այլափոխութիւնն։ Կարևոր է երբեմն պահպանել փոխայլուած ցեղերն՝ մանաւոր տեղափոխութեամբ պաղեցուցանելով զարիւնն։ Եթէ ամէնն ունի նպատակ մի հաստարակ ցեղն վերածել լաւագոյն տեսակի և կամ նորա ստեղծանել խառնուածոյս, այդ ցեղի որձի հետ էգ խառնածնի խառնութիւնն պարտի կրկնել մինչ ստան կամ տասն և երկու ծնունդ, և մինչև հնգեանց չորեք-

տասնիերորդն կամ վեշտասանն նոյա մի ազնուացուցիչ զօրութիւնն զարգանայ։ Արդ ազնուացուցանելոյ զմի ցեղն ինքեամբ առանց խառնուրդի, պէտք է միաւորել էգ ծնունդն որձ ծննդեան հետ, ի մէջ որոց մշտնջենաւորելոյ առանձինն հանգամանքն են շատ ընդարձակուած՝ պէտք է երկրորդել նոյն սերունդ պատշաճեալ օրինօք, մանաւանդ սննդեամբ. այդ առթիւ հասակն է իբրև մի ամենաբաւական բնաւորութիւն առ ի ձևակերպել զայնս այս կերպին ազդեցութեան ներքոյ։ Այս վերջին երկու նորաձևութեամբն ցեղից ազնուութիւնն յաճախ պահանջէ խառնութիւն մերձաւորաց մէջ, որ է ճշմարիտ ցեղապղծութիւնն, զոր թէպէտ յանդիմանած են ուղղակի յայլասերութիւն բերելոյ համար, բայց յաջողութիւն է գտած ի Բակեվել՝ ամենայն անգամ։ Անասնոց մէջ իշոց տեսակք և ձիք միայն ներկայացուցանեն այլախառն օրինակ, չամբիլ (զորախ) և իշոյ խառնուրդ ծնունդն անուանի ջորի. փասիան և մորի հաւուն եւ տուած են այլախառն օրինակ։ Անասնոց խառնից և ծննդեան գործոյ կատարմանն ամենայաջողակն է տարուան այն աւուրքն և ժամանակն, ուր անասունք եռանդով մտանեն ջերմութեան մէջ, այս ժամանակն այլասերութիւնն կարելի է շատ տեսակաց մէջ փոխել՝ կենաց կանոնիւ։

Շերամոց զուգաւորութիւնն տևէ ի 20էն մինչ 24 ժամն, բայց հասարակաբար որոշեն զայնս 8 կամ 10 ժամէն զկնի։ Իբրև զարգացման պատշաճաւոր մանաւոր գործածութիւն ունիմք պատմել, նախ՝ մաքեյն, որ զմատակախաղ ձին առնէ երկիվար ամոլցանել, զցուլն՝ եզն, զխոյն՝ ոչխար, զվարազն՝ խոզ, զաքաղաղըն՝ կուրտ, զմարին՝ գեր և պարարտ, զայնս վերստին ծննդեան անկարող առնելով. երկրորդ խնամել ձիս և պաճարական կենդանիս ձիոց քերչաւ, ասեղակով, խոզանակաւ, յարդեայ փնջով, և այնպէս այլն։ Մեղուաց զարգացման մէջ գլխաւոր խնամքն են ժողովել մեղուաց պարքն կամ հատուածքն, որք գաղթական գնան հաստատել բնական կամ գործնական բնակարանս։

(Մնացեալն է յետագայս)

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ

---

# ԲԱՐՈՅԱԿԱՆ

## ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ, ԿԱՄ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ.

(Շարունակութիւն)

«Մարդ ծառէ է ծառէ գանձուց էրրոց ծաղկէ ղծառէ»։

(Ս. Աւետ.)

Ի ներկայս՝ վերևվերոյ հաշուելով և համեմատելով՝ Հայոց մէջ առ հարիւրն քսան անձինք առաւել կամ նուազ ուսումն ունեցողներ կգտնուին։

Նոցա մէջ եթէ կիսով չափն մեր ազգային դպրոցաց և վարժարանաց մէջ կրթուած և սովորած են՝ թէ և ոչ աւելի ընդարձակ առարկաներով և զարգացմամբք, նոյնպէս եթէ ի նոցանէ ոմանք օտար և բարձր ուսումնարանաց դիմելով կատարելագործած են՝ կամ թէ աւելի կրթութիւն և գիտութիւններ ստացած